

զգեստի գեր կատարեց, իսկ երբ նա այլ եւս հարկաւոր չէ, դէն է չարտօնում կեդ-տոտոված ու ապականված:

Պատկերը, որ նկարել է ուսու լրագրողը, կա-րելի է ամբողջութեամբ, առանց նոյն իսկ մի գոյն պակասեցնելու. տեղաւորել մեր, հայկա-կան իրականութեան մէջ: Իւրաքանչիւր մա-մուլի կատարել թշնամի ակերտութիւնն ու գիմնականութիւնը նման է եւ հայոց խղճուկ մամուլի կողմից: Եւ անխնայ խնդրում են նրան: Վերացել են ոչ միայն գաղափար ու սկզբունք, այլ եւ ամեն մի ամօթ, պատկա-ռանք: Հայոց մամուլի ամենամեծ դժբաղդու-թիւնը այս վերջին հանգամանքն է. թէ ակե-րիւստը եւ թէ գիմնականը շտապում են իս-կոյն փողոց չարտօն իրանց, ընդունել այնպիսի զգուշիկ ձեւեր, որ իրան փողը ի շատէ յար-գող, մաքրութեան, վայելչութեան մասին տար-րական հասկացողութիւն անգամ ունեցող մար-դը չէ կարող նայել նրանց: Դուք մի սկզբունք կը պաշտպանէք, ձեզ դէմ գուրս կը գան կեդ-տերի մի ամբողջ կոտ, կրօնական ծամածռու-թիւններ, փողոցային հայտնաբերքներ... Դուք կողմէք ամաչանքի գրականութիւնը պղծողնե-րին՝ նրանց դէմքի առաջ բռնելով նրանց ամօ-թալի արարքները—եւ ոչինչ, փաստը, խօսքը, ճշմարտութիւնն ոչ միայն չեն ազդի, այլ եւ ա-մօթապարտները կը շտապեն կապել ձեր բե-րանը, զիմեղով այնպիսի միջոցներ, որոնք վայելուչ կարող են համարվել միայն կրօնաւե-րի մէջ: Թող լինի նոյն իսկ սկզբունքների բա-ցակայութիւն, միայն թէ մաքրութիւնը պահ-պանված լինի: Բայց հայոց դժբաղդ մամուլը այդ հասարակ բարեբեց էլ զրկված է, ուստի եւ համարեա անհնարին է նրան ձեռք դնալ: Ներքին Եւրոպայի իրողութիւնը իր բնա-կան հետեւանքներն է առաջանում: Հայոց մամուլը հարուստ է փողոցային գործիչներով եւ հէնց այդ պատճառով էլ ընթերցողներ չու-նի. անպատիւ է նա, ընկած, արհամարհված: Վատութեան, կեղտի արժանի հատուցում: Բայց զրանից ինչ միջոցաւորութիւն մի ազդի համար, որ ցաւեր ունի, որ ազնիւ, մաքուր, պարտա-ճանաչ մամուլի գեղավարութեան է կարօտ: Եւ մինչեւ Էրբ պիտի նա զգլի փողոցային մա-մուլից, մինչեւ երբ պիտի իր մայրենի լեզուով արտադրող կեղտոտութիւնները պատժելու գործով զբաղվի...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, մարտի 5-ին, երեկոյան ժամը 6-ին եւ 10 րոպէին թիֆլիսում զգացվեց երկրա-շարժի թոյլ հարուած, որից յետոյ տեղի ունե-ցաւ երկրի մի թիֆլիս տատանում: Եթէ այդ երկրաշարժը Ախալքալաքի գաւառի երկրա-շարժի հետեւոր արձագանքն էր, ուրեմն պէտք է ենթադրել, որ այնտեղ երկրաշարժի ցնցու-մը եղել է ուժեղին:

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Մարտի 5-ին, Վանքի մայր եկեղեցում նշանակված չորս պատգամաւորների ընտրութիւնը թիֆլիսի Մարիաման-Յովնանեան օրիորդական ուսում-նարանի հոգաբարձուներ ընտրելու համար՝ չը կայացաւ, որովհետեւ բոլոր ծխականներին հրաւիրաթուղթ չուղարկելու պատճառով՝ որո-

ոյժի զօրութիւն է ստանում, մանաւանդ որ Տօլստոյ ցոյց է տալիս մի ինչ որ նոր կեանքի, մի շատ բնական կեանքի բոլոր երջանկու-թիւնները, որտեղ այնքան հեշտութեամբ ֆը-րանսիացի ինտելիգենտը կարող է կարծես գրա-նել իր հոգու անդրորութիւնը:

Բայց այդ ինտելիգենտը չէ էլ կասկածում, որ Նիցշէի քարոզածը նոյն բուրժուազական հա-կարեկեղեկան եւ հակասօցիալական գաղա-փարն է:

Կամ թէ կարծելով միամտօրէն, որ արդի մարդկային կեանքի հնացած պայմաններից ա-զատվելու համար բաւական է բողոքել, առանց հաւաքական ոյժի, չըջապատող նեղահայեաց հասարակական դէմ է նա սկսում է սիրել, ի-րան մօտ զգալ եւ նոր մարգարէութիւն տես-նել Իրաքի գրողաւորութիւնը: Եւ վերջապէս նոր կեանք որոնելով, նա ընկնում է Տօլստոյի քարոզած մոլթ եւ միտքի, մարդկային բնա-կան պահանջներին անհամապատասխան իդէալ-ների աղբեղութեան տակ:

Այդ հոգեկան դրութեան ենթարկված է, ինչպէս արդէն ասացինք, բուրժուազիկ գուրս եկած ինտելիգենտը: Մնւած եւ աճած բուր-ժուական կեանքի պայմաններում, կապված իր ամբողջ բարոյական, մտաւոր ու ներքին կեանքով իր գասակարգի հետ—մի եւ նոյն

չափ թիւը (բոլոր ծխականների 1/8 մասը) չը լրացաւ: Ուստի յիշեալ պատգամաւորների ընտ-րութիւնը յետաձգվեց եկող կիրակւայ, ամսի 12-ին, որպէս զի Վանքի բոլոր ծխականներին, որոնք իրաւունք ունեն մասնակցելու ընտրու-թեանը, բառ հրահանգի հոգեւոր իշխանու-թեան, հրաւիրաթղթեր ուղարկվեցին: Այժմ հարց է՝ յետագայ ընտրութեան ժամանակ ինչ-պէս պէտք է վերաբերվի ժողովը կայացնելու համար բոլոր ծուխերի 1/8 մասը պէտք է ներ-կայ լինի, թէ նա պիտի նկատվի իրեն երկ-րորդ ժողով եւ օրինական պիտի համարվի որքան էլ ծխականներ լինեն: Մնացած եկեղե-ցիներում եւս ընտրութիւններ չը կայացան»:

Հաղորդակցութեան ճանապարհների միջոս-րութեան մէջ այժմ քննվում է բորտներին, վիրաւորվածներին, կատաղած կենդանիներին կծվածներին եւ խելագարներին երկաթուղի-ներով առանձին տանելու հարցը. դրա համար մտադրութիւն կայ սահմանել որոշ կանօններ: Մի եւ նոյն ժամանակ անհրաժեշտ է ճանաչ-ված հնար եղածին չափ շուտով լուծել այդ խնդիրը կամ գոնէ ժամանակաւոր կանօններ հաստատել մինչեւ հարցի վերջնական որո-շումը:

Երգչուհի Չփիներ «Աւելի լայն սփռիչ» օ-պերայի մէջ, որ տեղի ունեցաւ շաբաթ, մար-տի 4-ին, յարմար ամբիթ ունեցաւ ցոյց տալ իր ձայնի հարստութիւնը: Երգեցողութեան դասի տեսարանում նա հանգէս բերեց գեղգե-ղանքի, դալայի կերպի, staccato-ների մի ամ-բողջ աշխարհ: Շատ լաւ էր եւ երգիչ Բրօ-չի Ֆիլարայի դերում թէ երգով եւ թէ խա-ղով: Կիրակի, մարտի 5-ին, արքունական թատ-րոնում երգիչ Եւալովիկ կրկին Օնգին դերը, որը առաջ բերեց հիացում է ոգեւորութիւն: Եւալովիկի խաղով Օնգինի դերը ամբողջա-նում է կատարելապէս եւ շատ ամբարամասնու-թիւններ, որ ուրիշ գէպերում անցնում են աննկատելի կերպով, ստանում են նշանակու-թիւն եւ լրացնում են Պուշկինի հերոսի տիպը: Ուրախալի է արձանագրել, որ օրիորդ Պապա-յան իր գեղեցիկ խաղով աչքի է ընկնում եւ այժմ չէ նախանում առաջնակարգ արտիստի հետ միասին խաղալու ժամանակ: Թատրոնը ծայրէ ի ծայր լինէ էր:

Երկրաշարժութեան եւ պետական կա-լուածների միջոցաւորութիւնը մեծ քանակու-թեամբ նախատու հողեր է գտել կիրգիզների անապատում, Կասպից ծովի հիւսիս-արեւելեան ափերի մօտ: Այդ նախատու հողերը մի քանի հազար դեկտարին տեղ են բռնում, ամբողջ-նապէս պատկանում են գանձարանին, մի քա-նի միլիարդ պուդ նաւթ եւ պարունակում ի-րանց մէջ եւ շատ աւելի հարուստ են, քան Բագուի նաւթանոցները:

«МОСК. ВѢД.» ասելով՝ Պետերբուրգի քաղա-քային խորհրդի մէջ հարց է ծագել ի յիշատակ Պետերբուրգի հիմնադրութեան առաջնակա եր-կու հարիւրամակի համալսարանային ցուպ-հանդէս կազմել եւ շինել մի թանգարան Պետ-րոս Մեծի անունով, որի մէջ, բառ հնարաւո-

թամանակ նա մուծ գտնւմ է իր չըջապատող կեանքի անտանելի դրութիւնը, հասարակու-թեան ու անհատի պահանջների հակասու-թիւնները, ընտանիքի արհեստական, սուտ ու չինձու պարտականութիւնները եւ այլն:

Այս, բուրժուա ինտելիգենտը զգում է, եւ զգում է աւելի բնագործին, քան թէ գիտալ-ցաբար, որ կեանքը շատ քչերին միայն գոհաց-նում է, որ մարդկութիւնը արժանի է երջանու-թեան, թէ եւ կարծես քանի գնում, այնքան իրանից հեռանում է:

Բայց թէ մարդկային կեանքի որ պայման-ներն են, որ հասարակական հակասութիւններ են ծնեցնում, ինչու են մարդկութեան պա-հանջը եւ ինչից է նա նախ եւ առաջ տանջ-վում, որովհետ է ինտելիգենտի որոշ ուղին, որը այնքան ոյժ եւ եռանդ է ներշնչում նրան: Այդ բոլորը նրա համար ոչ պարզված եւ ոչ էլ բացատրված է: Եւ բուրժուազիային պատկա-նող, բայց նրանից արդէն զգված այդ տեսակ-անհասների համար, որոնց թիւը հազարներով է Յիւրանիստում, ամեն մի նոր խօսք, ամեն մի նոր միտք գրականութեան մէջ մեծ եւ անշն-չելի նշանակութիւն է ստանում:

Այդպիսի են մի Իրաքիով կամ մի Տօլստոյով յալիշտակվելու պատճառները. այդտեղ է եւ նոյն այդ հեղինակների խոր, թէեւ ոչ շատ

բութեան, պէտք է հաւաքել այն ամենը, ինչ որ այս կամ այն կերպ յիշեցնում է Ռուսաստանի մեծ վերանորոգչին:

Չեխական խմբի երկրորդ կօնցերտը գրաւել էր մեծ հասարակութիւն արտիստական ընկե-րութեան մէջ: Կօնցերտը պատճառեց իսկական բաւականութիւն: Մի քանի պիեսներ կրկնու-ցին հասարակութեան ցանկութեամբ:

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ հետադրում են. «Ներքին գործերի միջոցաւոր կարգադրութեամբ, Գան-ձակի նահանգապետը ամսիս 4-ին առաջարկեց Շուշու քաղաքային ինքնավարութեան բանալ քաղաքում երկրորդ ղեկաւորն «քաղաքային» անունով»:

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թ է հրան, փետրվարի 16-ին Ռուսական փոխառութիւնից յետոյ, Պարս-կաստանում ամենքին հետաքրքրող նորութիւ-նը Շահի առաջնակա ճանապարհորդութիւնն է, զէպի Եւրօպա Ներկայ Շահը, 47 տարեկան, դեռ ոտըը Պարսկաստանից դուրս չէ դրել: Գահաժառանգ ժամանակը քանի քանի անգամ ինչպեց, աղբրեց Նաւթեղիկի Շահին թոյլ տալ իրան գնալ Եւրօպա, բայց հայրը չը կամեցաւ այդ թոյլտուութիւնը տալ, որովհետեւ աւան-դական օրէնքը թոյլ չէ տալիս վախճանի (գահաժառանգին) երկրից դուրս գնալ, ինչպէս նոյն աւանդական օրէնքը պահանջում է, որ վախճանը իր բնակութիւնը ունենայ ոչ թէ մայրաքաղաքում, Թէհրանում, այլ անպատճառ թաւրիզում: Եւ այդ վնասակար սովորութեան պատճառով է, որ պարսից գահաժառանգը, կը թաղաւորում է, բոլորովին անծանօթ է ի-նքն ու միայն երկրի վիճակին, մարդկանց, որոնց աշակցութեամբ պէտք է կառավարել երկիրը, այլ նոյն իսկ գաղափար չէ ունենում, թէ ինչպէս պէտք է եւ կարելի է կառավարել մի երկրի՝ Նոր թագաւորութիւն, նոր մարդիք, ահա պարսից Շահերի սովորութիւնը, որից մնացածի չեն կամենում չեղել:

Հէնց որ Շահը մեռնում է, գահաժառանգը գալիս է Թաւրիզից, չըջապատված մի խումբ ձրիակներով, որոնք ամբողջ ժամանակ աչք են անկել, թէ երբ իրանց տէրը գահ կը նստի, որպէս զի իրանք եւս կարողանան այս եւ այն չաղ պաշտօնը ստանալ: Բոլոր նախորդ գործողները, փորձառու եւ հմուտ պաշտօնեա-ններ, անմիջապէս հեռացնվում են առաքարից եւ նրանց տեղը բռնում են նոր եկածները, որոնք որ եւ է կապ չունենալով անցիալի հետ, որ եւ է պետական պաշտօն վարած չը լինե-րով, որ եւ է աւանդութիւն չունենալովով սկսում են կառավարել երկիրը առանց որ եւ է ուղղութեան, սիստէմի, հոգ տանելով գլխա-ւորապէս հարստանալու, յղժանալու մասին: Ինչպէս է, որ նոր Շահը, ծանօթ չը լինելով հօր պաշտօնեաների հետ, փտահանում է մի-այն իր մարդկանց: Այդ հանգամանքը մէջ պէտք է որոնել այն երեւոյթի գլխաւոր պատ-ճառը, որ ծախվել Շահից յետոյ, ամեն մի նոր Շահի թագաւորութեան օրով, երկիրը

լայն ծաւալի գաղտնիքը—արդի ֆրանսիական մտաւոր կեանքում:

Այս բոլորը գուցէ տխուր մտաւորութիւն-ների կարող էր մեզ ենթարկել: Եթէ մենք աչ-քի առաջ չունենայինք մի այլ հանգամանք: Մինչդեռ բուրժուազիայից դուրս եկած վերեւ յիշված ինտելիգենտային մի մասը զգում է իրան ամենամիտաւորացի բարոյական ճգնա-ժամի աղբեղութեան տակ,—ինտելիգենտային միւս մասը կարողացել է արդէն խզել բոլոր կապերը իր դասակարգի հասկացողութիւնների ու հաւատամքի հետ:

Ըմբռնելով պատմութեան ընթացքը եւ հա-սարակական հակասութիւնների իմաստը, նա ամբողջովին նուիրվել է մի այլ դասակարգի փայլուն գաղափարները իրագործելու նպա-տակին:

Ահա թէ ինչու աշխատաւոր դասակարգի ձեռքից բռնած այս ինտելիգենտային իրան զգում է բարոյապէս անքան ուժեղ եւ անվե-հեր, անքան համարձակ նայում է իր չորջրը եւ միշտ ու միշտ առանց կանգնելու աւելի եւ աւելի առաջ է ընթանում:

առաջադիմելու, բարգաւաճելու փոխարէն, գահավէժ կերպով դէպի կործանումն է գնում: Եթէ Նաւթեղիկի Շահը սպանել չը տար մեծ Ամիր-Ներգամ Միրզա Թաղի խանին, այսօր Պարսկաստանը մի բարեկարգ եւ ամեն մի հո-վից տառանդող երկիր չէր լինի: Բայց դառ-նանք Շահի ճանապարհորդութեան:

Եւրօպական մեծ պետութիւնների բոլոր դեսպանները Թէհրանում արդէն պաշառ-նապէս հրաւիրեցին Շահին այցելել իրանց երկիրը. Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլի-լիայի, Գերմանիայի եւ Աւստրիայի վեհա-պետները շտապեցին յայտնել Շահին, որ ու-րախ կը լինեն տեսնել նրան իրանց մայրաքա-ղաքներում եւ Շահը շտապեց յայտնել, որ ու-րախութեամբ ընդունում է այդ հրաւերը: Ար-դու չամիգն եւս հրաւեր ուղարկեց Շահին եւ թէեւ վերջինս ցանկանում է այցելել նաեւ Կ. Պօլսը, բայց որովհետեւ չիա հոգեւորա-կանութիւնը սաստիկ հակառակ է այդ մտքին— իսկ ներկայ Շահը հաշուի է առնում հոգեւո-րականութեան կարծիքը.—այդ պատճառով դեռ որոշված չէ Կ. Պօլսի այցելութիւնը: Կալ եւ մի գլխաւոր արգելք, որ թոյլ չը տուէր նաեւ Նաւթեղիկի Շահին այցելել Կ. Պօլսը: Սուլթան Համիդը այն գաղափարը ունի, թէ ինքն է երջանիկ մարդարէի իսկական յաջը-րը, ինքն է ամբողջ Իսլամ աշխարհի խալիֆը: Այդ գաղափարին համաձայն չեն յիշները, որոնք միանգամայն հերքում են սուլթանի խալիֆա-յութեան հանգամանքը: Արդ, Արքունի Համի-դ պահանջում է, որ Պարսկաստանի Շահը, իբրեւ մահմադար, ներկայանալով իրան, մեծարանք մատուցանի, իբրեւ խալիֆ խալիֆային, իսկ այդպիսի պայման Շահը ընդունել չէ կարող թէեւ Պարսկաստանի ներկայ պետական ան-ձերից ոմանք համաձայն են համարաւանակա-նութեան գաղափարին եւ քարոզում են այդ գա-ղափարը: Այդ պետական մարդիկ մոռնում են, որ համարաւորութիւնը չէ կարող փրկել Պարսկաստանը, ինչպէս նա չի փրկի Թուր-քիան: Պարսկաստանի փրկութիւնը կայանում է միայն կուլտուրայի մէջ, առաջադիմութեան մէջ, բարեկարգութեան մէջ...

Շահը, ինչպէս որոշված է, մեկնելու է Թէ-րանից, ապրիլի 5-ին, դէպի Թաւրիզ: Մայիսի սկզբներին Ջուլֆայի վրայով գնալու է Բօք-ժօմ, այդտեղից Ֆարսիայի ջրերը, իր առաջ ջրութիւնը դարձանելու համար: Բժշկութիւնը յետոյ գնալու է ուղղակի Պետերբուրգ, Նիկո-լայ Կայսրին այցելութիւն տալու, ապա վիեն-նա, Բեռլին, Պարիզ, Լօնդօն եւ Լօնդօնից կամ Կ. Պօլս, կամ Հոմ, որից յետոյ Բաթոն-մի վրայով Բագու եւ այդտեղից Բաշու Ան-բողջ ճանապարհորդութիւնը պէտք է տեւի վից ամիս, ապրիլից սեպտեմբեր: Շահի հետ ճանապարհորդելու է եւ սաղաւաղաւոր, բայց դրանից Շահը հրամայել է, որ իր երկու եղ-բայրները—աւագ եղբայր Ջիլ-Սուլթանը եւ կրտսեր՝ Նայիբ Սալթանէն ուղեկցեն իրան Այդ զգուշութիւնը գործ է դնելու, որպէս զի այդ երկու իշխանները, Շահի բացակայութեան ժամանակ, պալատական յեղափոխութիւն առաջ չը բերեն: Դեռ լուծված չէ այն հարցը, եւ զփութարին հարցը, թէ ո՞վ պէտք է կառու-վարէ երկիրը Շահի բացակայութեան ժամա-նակ: Ի հարկէ, ամենաբնական կը լինէր այն

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հետեւեալ աղիւսակը ներկայացնում է ման-րաման տեղեկութիւններ Ախալքալաքի գա-ւառում 1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշար-ժից վնասված գիւղերի մասին: Այդ տեղեկու-թիւնները հաւաքել է տեղական ոստիկանու-թիւնը:

Գիւղ. անունները	Տեղեկ. քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ	Քանի- տներ
1. Մերիսիա	130	117	1048	86	2158	631			
2. Բեմանո(ձանձուղ)	125	117	1160	48	2362	163			
3. Եփրատ	72	69	654	9	1333	169			
4. Եփրատ Սամար.	54	51	510	27	1810	313			
5. Բալիս	48	45	440	»	1328	31			
6. Աղարկիթ	102	40	1230	»	298	31			
7. Թօկ-Սամար	50	39	496	46	2010	614			
8. Ականա	66	31	489	14	608	31			
9. Տրկիա	21	19	171	3	221	31			
10. Լօմառուր	26	19	312	»	696	31			
11. Մալաղի	78	17	740	1	500	31			
12. Արթուրի	48	15	422	2	394	31			
13. Ղազօ (Պօլալար) . .	38	12	470	1	6	31			
14. Ջալալու	38	11	416	»	206	31			
15. Սիլբե	10	10	120	»	271	31			
16. Բարաթիթ	130	8	1038	»	359	31			
17. Օրալիթթ	80	8	652	3	359	31			
18. Սօրի	84	7	793	»	118	31			
19. Բուրաշէն	50	5	466	»	2	31			
20. Արաղու	128	5	960	1	110	31			
21. Գօմ (Գօման)	110	4	920	3	30	31			
22. Բալանթ	30	4	252	»	74	31			
23. Բալանթ	45	3	480	»	73	31			
24. Արու	89	2	914	»	46	31			
25. Բուրաթ	51	2	451	1	100	31			
26. Խանդօ	130	2	1109	3	»	31			
27. Կանօ	32	1	390	»	»	31			
28. Կօթեղիա	78	1	681	»	37	31			

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванская ул., № 27.